# ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՄԵՄԵՐԸ ՈՐՊԵՍ ՎԻԶՈՒԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑ

ՆՎԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համացանցը տեղեկատվահաղորդակցական որակապես մի նոր միջավայր է, որը հատուկ հնարավորություն է տալիս մարդկանց բավարարելու իրենց մտավոր, ստեղծարար և հաղորդակցման պահանջմունքները: Համացանցային հաղորդակցության արդյունքում ձևավորվեց այսպես կոչված «համացանցային լեզվաբանություն» գիտական գիտելիքի նոր մոտեցումը:

Գոյություն ունեն «համացանցային հաղորդակցություն» հասկացությունը մեկնաբանող բազմաթիվ սահմանումներ, որոնց շարքում առավել համապարփակ է թվում Ի. Ն. Ռոզինայի առաջարկածը: Ըստ նրա՝ հաղորդակցությունը մարդկանց կողմից գիտելիք և փոխըմբռնում ձեռք բերելու նպատակով էլեկտրոնային հաղորդակցության օգտագործումն է տարբեր ոլորտներում, համատեքստերում և մշակույթներում[1]: Այս տիպի հաղորդակցություններում փոխազդեցությունները կատարվում են առավելապես նշանների միջոցով: Նոր նշանների ի հայտ գալը պայմանավորված է ժամանակակից հաղորդակցական տարածության փոփոխություններով: Բարդ նշանային միավորներն ազդում են մարդկանց գիտակցության վրա ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային միջոցներով: Ժամանակակից մարդը մշտապես շրջապատված է տարատեսակ նշանային համակարգերով: Այսօր համացանցային հաղորդակցություններում լայնորեն կիրառվում են վիզուալ կերպարները, որ զուգորդվում են տեքստային տեղեկատվությամբ:

Տեքստային և վիզուալ տեղեկատվության ինքնաբուխ վերարտադրության երևույթը գրականության մեջ ստացել է ***մեմ*** (meme) անվանումը, որը լատիներենից թարգմանաբար նշանակում է նմանություն, նմանակ[2]: «Մեմ» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է անգլիացի կենսաբան Ռիչարդ Դոքինսը 1976 թվականին իր “The Selfish Gene” գրքում[3]: Հիմնվելով *ռեդուկցիոնիստական* մոտեցման վրա՝ Դո-

---

[1] Տե՛ս **Розина И.** Педагогическая компьютерно-опосредованная коммуникация: теория и практика. М., 2005, էջ 3:

[2] Տե՛ս **Савицкая Т.** Интернет-мемы как феномен массовой культуры // "Культура в современном мире", 2013, № 3 // www.infoculture.rsl.ru/NIKLib/althome/news/KVM_archive/articles/2013/03/2013-03_r_kvm-s3.pdf/ 15.11.2019/, էջ 2:

[3] Տե՛ս **Richard Dawkins,** The Selfish Gene, Oxford University Press, 1976:

քինսը պնդում է, որ մեմը, ինչպես և գենը, տեղեկատվության փոխանցման և պահպանման միավոր է, միայն թե մեմի գործառական տիրույթը մշակույթն է: Թե՛ գենը, թե՛ մեմը ռեպլիկատորներ են (replicators), օբյեկտներ, որոնք կրկնօրինակվում և վերարտադրվում են ինքնուրույն: Մեմերը տարածվում են մարդուց մարդու, սերնդից սերնդի[4]: Այլ կերպ ասած՝ մեմը մշակութային տեղեկատվության փոխանցման հիմնական միավոր է:

Եթե «մեմ» հասկացությունը դիտարկենք սեմիոտիկ մոտեցման շրջանակներում, ապա այն կարող է դրսևորվել որպես միֆ: Ռոլան Բարտը միֆը սահմանում է հետևյալ կերպ. այն հաղորդակցական համակարգ է, որն արտահայտում է որոշակի գաղափար: Համաձայն նրա՝ միֆն այնուհետև վերածվում է նշանների և ստանում ձև[5]:

Ըստ «մեմ» հասկացության մեկնաբանման մյուս մոտեցման՝ այն մասնավորապես զանգվածային հաղորդակցություններում մեդիավիրուսի տեսակ է: Այս մոտեցման ներկայացուցիչներից է Դուգլաս Ռաշկոֆը, որը նշում է. ինչպես կենսաբանական վիրուսն է տարածվում մարդու օրգանիզմում, այնպես էլ կերպարներն ու գաղափարները՝ մեդիայում: Ուստի այդպիսի մեմերը նա անվանում է մեդիավիրուսներ: Մեմերի սահմանման հարցում Ռաշկոֆը համակարծիք է Դոքինսի գաղափարներին՝ հավատարիմ մնալով ռեդուկցիոնիստական մոտեցմանը: Ըստ Ռաշկոֆի՝ «մեդիավիրուսը՝ որպես զանգվածային փոփ մշակույթ, ազդում է մեր գիտակցության վրա, մեմը հանդես է գալիս որպես ակտիվ «ագենտ»՝ ծածկվելով լրատվամիջոցների թաղանթով: Մեմը գաղտնիաբար ազդում է մարդու կարծիքի վրա՝ այդ կերպ նաև ազդելով կարևոր նշանակություն ունեցող պատմական իրադարձությունների վրա: Մեդիավիրուսների առանձնահատկություններից է նաև այն, որ թե՛ մեդիավիրուսները, թե՛ դրանց բաղկացուցիչ մեմերը հնարավոր է «կառուցել» և «ապակառուցել»՝ այլընտրանքային գաղափարախոսական կոդ ստանալու համար»[6]:

Մեմերի բացատրման հաջորդ՝ *լեզվաբանական* մոտեցումը մեմը սահմանում է որպես կարծրատիպացված, հայտնի արտահայտություն կամ՝ երկխոսության կրկնօրինակում: Այս մոտեցումը կենտրոնանում է մեմի ձևի, այլ ոչ թե բովանդակության վրա: Համաձայն այս տեսակետի՝ մեմերի կարևոր բնութագրիչներն են ծիծաղաշարժ և էմոցիոնալ ազդեցությունը, միմյանց փոխլրացնող խոսքային և ոչ խոսքային միջոցների համադրությունը:

Համացանցը հաղորդակցական միջավայր է տեղեկատվության պահմանպան և փոխանցման համար: Հետևաբար՝ համացանցային

---

[4] Տե՛ս **Кронгауз М.** Мемы в интернете: опыт деконструкции // https://www.nkj.ru/ archive/articles/21327/, 17.11.2019/

[5] Տե՛ս **Барт Р.** Избранные работы. Семиотика. Поэтика. М.: Прогресс, 1994, էջ 73:

[6] **Рашкофф Д.** Медиавирус! Как поп-культура тайно воздействует на наше сознание. М., 2003, с. 178.

մեմերի հիմնական առաքելությունը ևս պետք է ուղղված լինի հաղորդակցության ամրապնդմանը, ինչպես նաև տեղեկատվության այս կամ այն կերպ փոխակերպումներին:

Առանձնացնում են համացանցային մեմերի հետևյալ գործառույթները[7].

➢ **Գաղափարների ներկայացում**. մեմերը արտահայտում, վերարտադրում և ստեղծում են գաղափարներ, սովորույթներ և արժեքներ, որոնք դրսևորվում են տեսողական և աուդիո որոշակի կերպարներով: Մեմերը գաղափարների կոդավորման, օգտատերերի էմոցիոնալ արձագանքների արտահայտման յուրահատուկ միջոց են:

➢ **Գաղափարախոսության հեռարձակում**. մեմերն այլ օգտատերերին ներկայացնում են հեղինակների աշխարհայացքները և ունեն կարևոր նշանակություն մշակույթի արտադրման և վերարտադրման գործընթացում: Մեմ ստեղծելիս հեղինակը տալիս է այս կամ այն սյուժեի սեփական մեկնաբանումն ու գնահատականը:

➢ **Անհատի ինքնաներկայացում**. համացանցային մեմերի միջոցով կազմակերպվում են փոխազդեցության գործընթացները: Մեմերը հնարավորություն են տալիս անհատներին արտահայտելու իրենց զգացմունքները, տեսակետներն ու գնահատականները:

➢ **Հանրույթի ինքնաներկայացման գործառույթ**. մեմերը ներկայացնում են այն հանրույթի գաղափարախոսությունը, որում նրանք կիրառվում են: Մեմերի օգնությամբ այս կամ այն իրավիճակին տրվում է գնահատական, նշվում են արժեքներն ու գաղափարները:

➢ **Հասարակությունում հաղորդակցության գործառույթ**. մեմերը չափազանց արդիական և օպերատիվ միջոցներ են որոշակի իրավիճակներին արձագանքելու ժամանակ: Մեմերը նկարագրում են իրողությունները՝ ստեղծելով աշխարհի պատկերը:

➢ **Հասարակության ինտեգրացման, նրա անդամների սոցիալականացման գործառույթ**. ինչպես նշում է Բուրդյեն, համացանցային մեմերը կարևոր դեր ու նշանակություն ունեն սոցիալական կապիտալի ձևավորման և վերարտադրման գործընթացներում, ինչպես նաև որպես ներխմբային փոխանակման առարկա ամրապնդում են խմբային կապերը:

➢ **Նույնականացման գործառույթ**. համացանցային մեմերն օժտված են սոցիոմշակութային կոդով: Որպեսզի հասկանալի լինի տվյալ մեմի հիմքում ընկած գաղափարը, անհրաժեշտ է նախ և առաջ տիրապետել այն մշակութային արժեքներին, որոնց հիման վրա ստեղծվել է այն:

➢ **Տեղեկատվական գործառույթ**. մեմերը տեղեկացնում են օգտատերերին իրադարձությունների մասին:

---

[7] Տե՛ս **Зиновьева Н.** Функции Интернет-мемов в обществе. Социологический взгляд // Интернет и современное общество: сборник тезисов докладов. Труды XVIII Всероссийской объединенной конференции «Интернет и современное общество», Санкт-Петербург, 22 – 25 июня 2015 г. СПб., 2015, էջ 54-56:

➢ **Աշխարհի պատկերի մասնատման գործառույթ**. մեմերը նպաստում են օգտատերերի պատկերացումներում աշխարհի խճանկարի ստեղծմանը: Նրանք նորությունների, ավանդույթի տարրերի խառնուրդ են, կոլաժ, որում ամեն ինչ ստորադասվում է այն գաղափարին, որն ընկած է մեմի հիմքում:

➢ **Սոցիալական ակտիվության ճնշման ապագործառույթ**. մեմերը նպաստում են սոցիալական կարևոր գործընթացներում ընդգրկվելուն, ինչպես նաև ստեղծում են շատ կարևոր նշանակության նորություններից տեղեկացվածության պատրանք:

Փաստորեն, մեմերը համացանցային հաղորդակցությունների կազմակերպման յուրահատուկ միջոցներ են, որոնք ուղղված են մարդկանց տեսողական ընկալմանը և կոչված են նկարագրելու, մեկնաբանելու սոցիալական իրականությունում տեղ գտած որոշակի իրավիճակներ: Մեզանում ևս բավական լայնորեն կիրառվում են համացանցային մեմերը որպես երևույթները նկարագրելու միջոցներ:

Հայկական համացանցային տարածությունում կիրառվում են գրականության մեջ առանձնացված համացանցային մեմերի գրեթե բոլոր տեսակները[8]:

**Տեքստային մեմեր**. բաղկացած են բառերից կամ արտահայտություններից: Սրանք կարող են լինել տեքստային հատվածների սկսող կամ ավարտող արտահայտություններ: Տեքստային մեմերը լայնորեն օգտագործվում են համացանցային շփումներում կոմիքսների տեսքով, սակայն մեկ տարբերությամբ. տեքստային մեմերին բնորոշ է «ժլատությունը», և դրանցում բացակայում են միաժամանակյա մի քանի տարրեր: Օրինակ՝ «Այն անհարմար պահը, երբ…», «Վարագույր» և այլն: Ամենակիրառվող տեքստային մեմերն են համացանցային ժարգոնային բառապաշարում կիրառվող հապավումները՝ LOL (Laughing Out Loud), BTW (By The Way) և այլն:

Վերջերս տարատեսակ իրավիճակներին արձագանքելու, դրանք մեկնաբանելու կամ գնահատելու ժամանակ հայ օգտատերերը ևս օգտագործում են մի շարք տեքստային մեմեր: Թեև այս արտահայտությունները ստեղծվել են քաղաքական համատեքստում, այնուամենայնիվ դրանք իբրև մեմեր կիրառվում են տարաբնույթ իրավիճակներում: Այդպիսի մեմերի վառ օրինակներ են՝ «Եկել ես այստեղ, մեր տոնը փչացնում ես, որ ի՞նչ անես», «Նառա՛, դու սուս», «Երեխաները պարտավոր են մեծանալ», «Իյա՛, իրո՞ք», «Գաղտնի բառը դա թաքուն բառը չէ», «Ցմահ կլինի մահապատիժը» և այլն:

**Պատկեր մեմեր**. այս մեմերը պատկանում են այն տեսակին, երբ առանցքային նշանակությունը տրվում է պատկերներին, նկարներին: Հարկ է նշել, որ պատկերը կարող է լինել ինչպես իրական նկար կամ

---

[8] Տե՛ս **Щурина Ю.** Интернет-мемы: проблема типологии // "Вестник Череповецкого государственного универиситета", 2014, № 6, էջ 87-89:

լուսանկար, այնպես էլ ստեղծագործական որևէ աշխատանքի արդյունք: Այս դեպքում կարևորվում է նկարների խմբագրման գործառույթը (photoshop, illustrator և այլն): Այդ ճանապարհով կարող են ստեղծվել հումորային տեսողական մեմերը՝ կոմիքսները, որոնք հումորով նկարագրում են սոցիալական, քաղաքական, մշակութային կա՛մ տնտեսական որոշակի իրավիճակներ, կա՛մ մարդկանց խմբեր:

Այսօր համացանցում պատկեր մեմերի ամենատարածված տարբերակներն են հայտնի մեմ կերպարները, օրինակ՝

1. 2. 3.



***Rageguy***՝ զայրացած մարդը. կերպար, որն օգտագործվում է զայրույթ կամ դժգոհություն արտահայտելու համար

***Forever Alone***՝ ընդմիշտ միայնակ մարդը. կերպար է, որի միջոցով արտահայտվում է մենությունը ու կյանքից հիասթափությունը

***Facepalm***՝ դեմքը փակել ափով. նշանակում է ամոթի զգացում

Հայաստանյան օգտատերերը ևս հաճախ են կիրառում պատկեր մեմերը՝ ստեղծելով հետաքրքիր կոլաժներ, օրինակ՝

***Նկար 1***

***Նկար 2***

**Մեդիամեմեր**. մեմերի այն տեսակն է, որի հիմքում ընկած են հումորային տեսանյութերը, որոնք տեղադրում և տարածում են օգտատերերը: Այս դեպքում տեսանյութերը հնարավոր է ուղեկցել տեքստային

արտահայտություններով, որոնք կարող են ենթարկվել որոշակի քերականական փոխակերպումների: Թավշյա հեղափոխության շրջանում սոցիալական ցանցերում տարածում գտան նմատատիպ երկու տեսանյութեր: Առաջին մեդիամեմը ստեղծվել էր «Սուպեր Մարիո» հայտնի խաղի մոտիվներով. Մարիոն (Նիկոլ Փաշինյանը) փորձում է հաղթել դևին[9] (նկար 3): Մյուս տեսանյութը թրեյլեր էր, որում ներկայացվում է երկրում ստեղծված քաղաքական իրավիճակը՝ «Թավշյա հեղափոխությունը» և հաղթանակը[10]:

***Նկար 3***

**Կրեոլիզացված մեմեր.** մեմերի այս տեսակը խոսքային և տեսողական բաղադրիչների համադրություն է: Սրանց ստեղծման դեպքում լեզուն համադրվում է նշանային այլ համակարգերի հետ: Այսինքն՝ այս մեմերը միաժամանակ կարող են պարունակել և՛ արտահայտություն, և՛ պատկեր՝ դառնալով բարդ կառուցվածքով մեկ նշանային համակարգ: Մեմի խոսքային և ոչ խոսքային տարրերը միավորվելով դառնում են կառուցվածքային, իմաստային և գործառական մեկ ընդհանուր ամբողջություն՝ հասցեատիրոջից պահանջելով տեսողական ընկալում: Հարկ է նշել, որ կրեոլիզացված մեմերն ամենալայն տարածում գտածներն էին թավշյա հեղափոխության ժամանակ(տե՛ս նկար 4):

***Նկար 4***

Կրեոլիզացված մեմերի շատ տարածված տարատեսակ են համարվում ***դեմոտիվատորները***, որոնք ի հայտ են եկել 20-րդ դարի վերջում ԱՄՆ-ում, երբ արևմտյան գործարար ոլորտն անձնակազմի կառավարման գործընթացում սկսեց կիրառել մոտիվացիոն հնարքներ: Աշխատակիցների հետաքրքրվածությունը և շահագրգռվածությունը մեծացնելու համար

[9] Հոլովակը կարելի է դիտել՝ https://www.youtube.com/watch?v=_DtXbW7wBmM հղմամբ:

[10] Հոլովակը կարելի է դիտել՝ https://www.youtube.com/watch?v=Bqb-qpRUd78 հղմամբ:

կազմակերպությունը սկսեց օգտագործել մոտիվացիոն պաստառներ, որոնք դարձան սոցիալական գովազդների տարատեսակներ: Դրանք կոչված էին ստեղծելու հասարակական որոշակի տրամադրություններ: Մոտիվատորները կիրառվում էին որպես քարոզչական միջոցներ: Դեմոտիվատորների թեմատիկան հետզհետե ընդլայնվեց: Ի հայտ եկան նաև որոշ հումորային կերպարներ: Այժմ դեմոտիվատորները համացանցի միջոցով լայնորեն տարածված են աշխարհի բոլոր երկրներում: *Դեմոտիվատորը* պատկեր է, որը բաղկացած է սև շրջանակով նկարից և նկարի իմաստը բացատրող կարգախոսից կամ նախադասությունից[11]: Դեմոտիվատորներն ունեն հստակ կառուցվածք. բաղկացած են երեք հիմնական տարրերից՝ սև շրջանակով նկար, մեծ տառերով գրված կարգախոս և կարգախոսը մեկնաբանող միտք՝ գրված համեմատաբար մանր տառերով: Այս երեք տարրերը միասին արտահայտում են իմաստ և ընկալվում են որպես մեկ ամբողջական տեղեկատվություն (նկարներ 5-6-ում արտասահմանյան և հայաստանյան օգտատերերի ստեղծած դեմոտիվատորների օրինակներ են):

*Նկար 5*




*Նկար 6*

Այսպիսով, սահմանելով «համացանցային մեմ» հասկացությունը և խոսելով մեմերի բազմազանության ու գործառական ընդգրկվածության մասին կարող ենք ասել, որ դրանք տեսողական հաղորդակցությունների կարևոր ժանրերից են: Համացանցում մեմերի գործառությունը դեռևս նոր երևույթ է և էապես նպաստում է վիրտուալ հարթակում հաղորդակցությունների արդյունավետ իրականացմանը, այն է՝ հաղորդակցությունների վիզուալացմանը:

**Բանալի բառեր** – *սոցիալական ցանց, համացանցային հաղորդակցություն, տեսողական հաղորդակցություն, համացանցային մեմեր*

[11] Տե՛ս **Бугаева И.**, Демотиваторы как новый жанр в Интернет-коммуникации: жанровые признаки, функции, структура, стилистика, էջ 2 // http://rastko.rs/filologija/stil/2011/10Bugaeva.pdf, /18.11.2019/

**НВАРД МЕЛКОНЯН, АННА КАРАПЕТЯН** – ***Интернет-мемы как средство визуальной коммуникации.*** – Сегодня интернет-мемы играют заметную роль в процессе визуальной коммуникации. Они основаны на визуальном восприятии людей и призваны описывать и интерпретировать определённые ситуации в общественной жизни. К ним активно прибегают пользователи социальных сетей. Их специфика обусловлена механизмами их формирования, распространения и актуальностью. В современной науке изучение интернет-мемов как эффективного средства визуальной коммуникации считается весьма уместным и своевременным.

**Ключевые слова:** *социальная сеть, интернет-коммуникация, визуальная коммуникация, интернет-мемы*

**NVARD MELKONYAN, ANNA KARAPETYAN** – ***Internet Memes as a Means of Visual Communication.*** **–** Today Internet memes have a special role in the process of organizing visual communication. Internet memes are based on the visual perception of people and are designed to describe and interpret certain situations in social life. In our society Internet memes are widely used by social network users. Their specificity and uniqueness are due to the mechanisms of their formation, actualization, and distribution. In modern science, the study of Internet memes as an effective means of visual communication is considered to be highly relevant.

**Key words:** *social network, internet communication, visualization, visual communication, internet memes*

Ներկայացվել է՝ 25.10.2019
Գրախոսվել է՝ 25.11.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019